

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

## Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ «Աշակերտների ներգրավվածությունը նորագույն  
տեխնոլոգիաների ու մեթոդների օգնությամբ»

Կատարող՝ Արմենուհի Չարչոլյան

«Արարատ կրթահամալիր»

Ղեկավար՝ մ. գ. թ. դոցենտ Աննա Յայլոյան

## Բովանդակություն

Նախաբան.....	3
Դասավանդման նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման անհրաժեշտությունը դպրոցում.....	5
Գրականության ակնարկ.....	11
Գործնական համատեքստ.....	18
Հետազոտության ընթացք.....	20
Տվյալների մշակում և վերլուծություն.....	22
Եզրահանգում.....	23
Գրականության ցանկ.....	25

## Նախաբան

Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Իսկ դա էլ կյանքի հրամայական պահանջն է: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի աշակերտներին՝ խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու:

Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ., ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ., Դակար): Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը (ՖԷՀ) արդեն 24 տարի տարաբնույթ ծրագրերի միջոցով փորձում է հայ հասարակությանը ընկալելի դարձնել սոցիալ-դեմոկրատիայի հիմնական գաղափարներն ու արժեքները՝ ազատությունը, արդարությունը և համերաշխությունը: Մենք խորապես հավատացած ենք, որ կենսունակ և ուժեղ ժողովրդավարության համար այս արժեքներով առաջնորդվող հասարակությունը հիմնական շարժիչ ուժն է երկրում: Իսկ ահա արժեքահեն և իրավագիտակից հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է: Ուսուցիչները բազմիցս բարձրաձայնել են, որ դպրոցական դասագրքերում առաջարկվող մեթոդները չեն խթանում աշակերտների ակտիվ մասնակցությունը, վերլուծական և քննադատական միտքը:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից տեխնոլոգիաների առաջընթացը, աննախադեպ փոխելով մեր կյանքը, նրա տարբեր ոլորտների, այդ թվում նաև դպրոցի առջև պահանջ է դրել ինտեգրել նոր տեխնոլոգիաներ, գործել ժամանակակից մարդու պահանջներին համապատասխան նոր մոտեցումներով:

Այսօր ուսուցիչը ոչ միայն բացատրողի, այլև համակարգողի դերում է: Նա կարող է սովորողին ներկայացնել թեմայի շրջանակում եղած նյութերը, դրանք

գտնելու, դրանց միջոցով գիտելիքն ամրապնդելու հմտությունները: Այս կերպ նա երեխային տալիս է ո՛չ թե պատրաստի գիտելիք, այլ սովորեցնում է դրան հասնելու միջոցներն ու եղանակները, նրա մեջ զարգացնում նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտումը: Սովորողը իր փնտրտուքների ընթացքում լրացնում է գիտելիքի պակասը, ձևավորում գիտական աշխարհայացք: Եվ քանի որ ուսուցիչը միանգամից լուծում է մի քանի խնդիր, այդ թվում ոչ միայն այն, թե ինչ պետք է սովորեցնի աշակերտին, այլև ինչպես ու ինչ մեթոդների օգնությամբ, ուստի ժամանակի պահանջներով քայլող ուսուցչի համար ակտուալ է կրթական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում:

Այժմ ընթանում է ուսուցման ձևերի և մեթոդների փնտրտուք, ինչը համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ թույլ է տալիս բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը և աշակերտների մոտիվացումը:

Այս փնտրտուքի ընթացքում ուսուցիչը պետք է նոր տեխնոլոգիաներ ու մեթոդներ կիրառելու հարցում լինի նաև գրագետ, որպեսզի դասավանդվող առարկան կարողանա լուծել կրթության առջև ծառայած արդի խնդիրները. դրանք են՝

- կրթական ծրագիրն ու պահանջները սովորողի համար հնարավորինս մատչելի ներկայացնելը
- թեմայի յուրացումը ապահովելը
- սովորողի ունակությունների, կարողությունների և հմտությունների զարգացումն ապահովող աշխատանքի ձևեր գտնելը
- ստացած գիտելիքները կյանքում կիրառելու հմտություններ սովորեցնելը
- ինչպես անհատապես, այնպես էլ խմբային տեղեկատվություններ վերլուծելը
- հիմնական խնդիրները բացահայտելը
- այլընտրանքային լուծումներ ստեղծելն ու դրանք գնահատելը

Արդյոք արդյունավետ է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսուցանվող դասերի ընթացքում կամ սովորողի գիտելիքը ստուգելու նպատակով որպես լրացուցիչ նյութ և ինչպես է այն դարձնում դասապրոցեսը հետաքրքիր:

# ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Կրթության կազմակերպման մեթոդների և ձևերի փնտրտուքը հանգեցրեց նոր եզրույթի ստեղծման. «Ժամանակակից դաս»: Այն, ճիշտ է, իր մեջ ներառում է ավանդական դասի տարրեր, բայց և հակադրվում է դրան: Նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների դերը մեծ է աշխարհաճանաչողական առումով: Երեխայի կյանքում տեխնոլոգիաները (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) առաջնային դեր ունեն, ինչի շնորհիվ էլ դրանց միջոցով կարելի է կենտրոնացնել սովորողի ուշադրությունը դեպի դասը, այն նրա համար դարձնել հետաքրքիր: Նորագույն տեխնոլոգիաներով աշխատելը, սովորողի մտավոր կարողությունների զարգացման ավելի արդյունավետ միջոց կդառնա, քանի որ երբեմն ուղղակի հեռախոսին կառչած աշակերտը դրա միջոցով կարող է փորձել որևէ թեստ լուծել, խաղի միջոցով որևէ առաջադրանք կատարել կամ ուսուցչի կողմից հանձարարված այլ աշխատանք կատարել՝ աստիճանաբար հասկանալով, որ նորագույն տեխնոլոգիաները կարող են հանդիսանալ ոչ միայն զբաղմունքի առարկա, այլև կրթվելու միջոց:

Նորարարական տեխնոլոգիաները իրենցից ենթադրում են ուսուցման մեթոդների, ուսումնառության մեթոդների, տեխնիկայի, կրթական միջոցների համակարգեր, որոնք ուղղված են ժամանակակից սոցիալ-մշակութային պայմաններում երեխայի անձնական զարգացման դինամիկ փոփոխությունների շնորհիվ դրական արդյունքի հասնելուն: Մանկավարժական նորամուծությունները կարող են կա՛մ փոխել կրթության և վերապատրաստման գործընթացները, կա՛մ բարելավել: Նորարարական տեխնոլոգիաները համատեղում են առաջադեմ ստեղծագործական տեխնոլոգիաները և կրթության կարծրատիպային տարրերը, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը դասավանդման գործընթացում:

Ի՞նչ է «Մանկավարժական տեխնոլոգիան»: Ներկայումս մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը հաստատապես մտել է մանկավարժական լեքսիկոն: Այնուամենայնիվ, մեծ հակասություններ կան դրա ըմբռնման և օգտագործման մեջ: Բ.Տ. Լիխաչովը տալիս է հետևյալ սահմանումը՝ «Մանկավարժական տեխնոլոգիա - հոգեբանական և մանկավարժական վերաբերմունքի մի շարք, որոնք որոշում են ձևերի, մեթոդների, մեթոդների, ուսուցման մեթոդների, կրթական միջոցների հատուկ շարք և դասավորություն. դա մանկավարժական գործընթացի կազմակերպչական և մեթոդական գործիքակազմն է»:

Ի.Պ. Վոլկովը տալիս է այս սահմանումը՝ «Մանկավարժական տեխնոլոգիան պլանավորված ուսումնական արդյունքների հասնելու գործընթացի նկարագրությունն է»:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-յի՝ «Մանկավարժական տեխնոլոգիան համակարգված մեթոդ է ստեղծելու, կիրառելու և սահմանելու գիտելիքների ուսուցման և յուրացման ողջ գործընթացը՝ հաշվի առնելով տեխնիկական և մարդկային ռեսուրսները և դրանց փոխազդեցությունը, որի նպատակն է օպտիմալացնել կրթության ձևերը]: Մեր հասկացողությամբ մանկավարժական տեխնոլոգիան իմաստալից ընդհանրացում է, որը ներառում է տարբեր հեղինակների (աղբյուրների) բոլոր սահմանումների իմաստները: Մանկավարժական տեխնոլոգիայի սկզբունքորեն կարևոր ասպեկտը երեխայի դիրքն է կրթական գործընթացում, մեծահասակների վերաբերմունքը երեխայի նկատմամբ: Այստեղ առանձնանում են տեխնոլոգիաների մի քանի տեսակներ: Մեթոդը, մեթոդը ուսուցման գործիքը որոշում են բազմաթիվ գոյություն ունեցող տեխնոլոգիաների անվանումները՝ դոգմատիկ, վերարտադրողական, բացատրական-պատկերազարդ, ծրագրավորված ուսուցում, պրոբլեմային ուսուցում, զարգացնող ուսուցում, ինքնազարգացման ուսուցում, երկխոսական, հաղորդակցական, խաղային, ստեղծագործական և այլն:

Իր աշխատանքը կազմակերպելիս այսօր ուսուցիչը վերլուծում է դասավանդման ավանդական մեթոդների դրական կողմերն ու սովորողի համար ոչ արդիական ու անհետաքրքիր կողմերը, սովորեցնելու և սովորածը ստուգելու գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման առավելությունները:

Մարդկանց մեծամասնությունը ամբողջ աշխարհում ներգրավվել է առօրյա կյանքում տեխնոլոգիայի օգտագործման մեջ, քանի որ այն խնայում է ժամանակ և ջանք: Այս առումով, իմ հետազոտական աշխատանքը կանդադառնա ուսուցման և կրթության մեջ ներդրված նորարարական տեխնոլոգիաներին և դրանց ազդեցությանը հայերենի ուսուցման գործընթացի վրա, տեխնոլոգիական գործիքների՝ ուսումնական հաստատություններում թեմայի ուսուցմանը նպաստելուն:

Նորագույն տեխնոլոգիաները ոչ միայն ազդել են կրթության ոլորտի վրա, այլև ընդլայնել և մարտահրավեր են նետել մեր մտածելակերպին: Ուսումնական միջավայրը ներառում է համակարգիչներ, ինտերնետ, նաև խաղեր, սմարթ հեռախոսներ, իսկ մոտ ապագայում կներառվեն՝ 3D տեխնոլոգիաներ:

Մարդկանց սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը, իր հերթին, ենթադրում է մշտական աշխատանք և նշանակալի ներդրումներ երկրի կառավարության կողմից:

Մեծ Բրիտանիան վաղուց մեկնարկել է «Տեխնոլոգիաների կիրառման ռազմավարությունը և հաջորդ սերնդի ուսուցման քարտզարշավը»՝ կրթության մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառման առավելությունների մասին: Կրթության մեջ տեխնոլոգիաների ինտեգրումն ուժեղացնելու նպատակով Չինաստանը թողարկել է «Կրթության թվայնացման տասնամյա պլանը (2011-2020թթ.)» :

Կրթության համակարգի փոխակերպման ծրագիրը պետք է իր հիմքում ունենա հասարակության զարգացման մի որոշ հեռանկար կամ մոդել (օրինակի համար՝ Տեղեկատվական հասարակություն կամ «կայուն զարգացում»), ինչպես նաև՝ հաշվի նստի այն հիմնարար փոփոխությունների հետ, որ մեր երկրում կատարվել են վերջին տարիների ընթացքում:

Արդի տեխնոլոգիաների նշանակության աճը և դրանց տիրապետելու անհրաժեշտությունը բերում են գրագիտության նոր, ավանդականից տարբեր հասկացություն, մեծ փոփոխության է ենթարկվում նաև սովորելու և սովորեցնելու բնույթը:

Այսօր արդեն դպրոցական պրակտիկայում սկսել են կիրառվել ուսուցման նոր՝ ոչ ավանդական, տեխնոլոգիաներ, որոնք միտված են փոխարինելու ավանդական կրթության մեթոդներին, որոնք հիմնականում ունեն բացատրողական և դիդակտիկ բնույթ: Կրթական յուրաքանչյուր գործընթացի իրականացման համար պահանջվում է որոշակի գործողությունների համակարգ: Եթե այդ համակարգը բավականաչափ տարբերակված է և ճկուն, այն հիմնականում անվանում են մեթոդական, իսկ եթե այն հիմնված է ճշգրիտ հաշվարկված հաջորդական քայլերի վրա, որով ապահովում է ցանկալի արդյունք, այն անվանում են տեխնոլոգիա: «Տեխնոլոգիա» բառը թարգմանվում է որպես ուսմունք կամ գիտություն վարպետության մասին:

«Տեխնոլոգիա» հասկացությունը թերևս կրթության ոլորտ փոխանցվել է այլ ոլորտներից: Ուսումնասիրելով մարդկության առաջընթացի պատմությունը, կարելի է եզրակացնել, որ «տեխնոլոգիա» հասկացությունը ի հայտ է եկել ու լայն գործածության մեջ մտել նախ արդյունաբերության ոլորտում: Իսկ նախահիմքը մարդու որոշակի ոլորտում ունեցած փորձի կատարելագործումն է, ինչի շնորհիվ մարդը սկսել է կիրառել աշխատանքային նոր ձևեր՝ իր գործն ավելի հեշտացնելու, աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով: Աշխատանքին այս կերպ մոտենալու արդյունքում յուրաքանչյուր մասնագիտության մեջ ի հայտ են եկել ավելի հմուտ ու առաջատար մասնագետներ:

Կրթությունը պետք է լինի ճշմարիտ, լիակատար, պարզ ու հաստատուն: Կրթության բնագավառում տեխնոլոգիայի, ուսումնական տեխնիկական միջոցների կիրառման շնորհիվ ուսուցիչը հնարավորություն է ստանում կիրառել ակտիվ ուսուցողական, ժամանակակից մեթոդներ, համակարգչայնացնել դասը, անցկացնել համակարգված, բազմաբնույթ դաս: Դասերի այս տիպերի կառուցման ու դասերը

վարելու ընթացքում ուսուցիչը դառնում է տեղեկատվական աղբյուր, նորագույն միջոցներով դասի ուղղորդող, նոր կարողությունների ու հմտությունների ձեռքբերման աղբյուր: Եվ այս ամենի հետ մեկտեղ շարունակում է պահպանել դաստիարակողի գործառույթը ինչպես ավանդական ազգային արժեքները պահպանելու, այնպես էլ ամեն նորի մեջ գտնելու չվնասող, օգտակար արժեքները: Նորագույն մեթոդներով ու տեխնոլոգիաներով դասեր վարելը այսօր մանկավարժական–մասնագիտական գիտելիքներից բացի պահանջում է նաև տեխնոլոգիական գիտելիքներ: Այս ամենին տիրապետել, կնշանակի դառնալ լավ ուսուցիչ: Վ. Բեսպալկոյի խոսքերը վկայում են, որ «գիտականորեն հիմնավորված լավագույն ուսուցման և դաստիարակման տեխնոլոգիան–հենց դա է՝ մանկավարժական արվեստը»: Ա. Ս Մակարենկոն կարծում է, որ մանկավարժական տեխնոլոգիան սերտ կապված է մանկավարժական վարպետության հետ: Վարպետությունը մանկավարժական տեխնոլոգիաների կատարյալ տիրապետումն է: Մյուս կողմից, մանկավարժական վարպետությունը, մանկավարժական տեխնոլոգիաների բարձր տիրապետումն է: Մինևույն տեխնոլոգիան, կարող է իրականացվել տարբեր ուսուցիչների կողմից, որտեղ և կբացահայտվեն ուսուցչի մանկավարժական վարպետությունը և պրոֆեսիոնալիզմը:

Կարևոր է դիտարկել, որ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով վարած դասերը հնարավորություն են տալիս ընդլայնելու ուսումնական նյութի ծավալը: Օրինակ՝ համակարգչի առկայությունը թույլ է տալիս որոնելու լրացուցիչ նյութեր գրողների կյանքի, նրանց կենսագրությանն առնչվող մարդկանց, վայրերի մասին, դիտելու վավերագրական ֆիլմեր, գրողների ստեղծագործությունների հիման վրա նկարահանված ֆիլմեր («Պեպո», «Ջրհորի մոտ» . . . ), պատրաստել սահիկաշարեր տարբեր թեմաներով, լուծել և կառուցել բազմապիսի թեստային առաջադրանքներ, ստեղծել խաղ վարժություններ և կատարել նախագծային աշխատանքներ (սովորողները կարող են լինել գրողների ծննդավայրերում, տուն-թանգարաններում, կազմակերպել հանդիպումներ գրողների կենսագրությանը գիտակ անձանց, նրանց հետնորդների (թոռ, ազգական) հետ, կատարել նկարահանումներ): Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը մեծ փոփոխություններ է բերել կրթության մեջ, ինչը վկայում են ուսումնական միջավայրի, ուսուցման բովանդակության, ուսուցման ձևի և այլնի փոփոխությունները: Շատ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ժամանակակից տեխնոլոգիաները կարող են բարելավել կրթության արդյունքները:

Դիտարկելով նորագույն տեխնոլոգիաների ու մեթոդների անհրաժեշտությունը՝ հարկ է նշել դրանց դրական կողմերը՝

- նոր տեխնոլոգիաների կիրառումը ինչպես ուսուցչին, այնպես էլ սովորողին տալիս է մի շարք առավելություններ



- ուսումնական գործընթացը տեսողական և ասոցիատիվ միջոցների շնորհիվ ակտիվանում է, դառնում հետաքրքիր
- մատուցվող նյութը դառնում է տեսողական, տեսանելի ու ավելի ընկալելի
- նոր տեխնոլոգիաների ներմուծումը չի անտեսում ավանդական մեթոդները, այլ աշխատանքը դարձնում է բազմաշերտ, ժամանակակից
- ժամանակի հետ քայլող ուսուցիչը ավելի ընդունված է սովորողի կողմից, նրա համար հիանալի օրինակ է ձգտելու, կատարելագործվելու
- ուսուցչին հնարավորություն է տրված հասնելու իր աշակերտների ակադեմիական կատարողականի և տեխնոլոգիական գրագիտության բարելավմանը:

Սովորողի մոտ ձևավորվում է դիմացինին լսելու, սեփական կարծիքը անկաշկանդ արտահայտելու, իմացածը վերլուծելու, համադրելու, սովորածից եզրահանգում կատարելու կարողություններ: Մանկավարժական նորագույն տեխնոլոգիայով դասը պլանավորելիս ուսուցիչը ճշգրիտ նախագծում է իր աշխատանքն ու հստակ կիրառում պլանավորածը, ինչի արդյունքում հստակորեն հասանելի են դառնում նախագծված աշխատանքի նպատակներն ու արդյունքները: Ուսուցանող յուրաքանչյուր տեխնոլոգիական միջոց ու կիրառվող մեթոդ պետք է ապահովի արդյունքի կանխատեսելիությունը, ունենա գործողությունների ճշգրիտ ու համակցված այնպիսի հերթականություն, ինչը կտանի նպատակից մինչև արդյունք, կապահովի հավասար պայմաններ բոլոր աշակերտների, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ աշակերտի համար, կապահովի սովորողի կրթական ցանկություններն ու պատկերացումները:

Նորագույն տեխնոլոգիաներով ու մեթոդներով հագեցած դաս անցկացնելու համար ուսուցչից պահանջվում է անընդհատ ինքնակրթություն, մասնագիտական նորություններին տեղեկանալու հետևողականություն, նոր տեխնոլոգիաների ուսումնասիրություն և կիրառելու հմտություններ:

Պլանավորած դասերի ու տեխնոլոգիայի կիրառման ընտրությունից ելնելով՝ ուսուցման մեթոդները լինում են ակտիվ և պասիվ: Պասիվ ուսուցման ընթացքում սովորողները միայն դիտում կամ լսում են (յութության, ցուցադրում, սահիկներ, էքսկուրսիա): Ակտիվ ուսուցման ընթացքում սովորողը ինքն է կազմակերպում աշխատանքը (հետազոտական աշխատանք, միջոցառում, նախագծային կամ գործնական աշխատանք):

Եվ եթե ըստ պետական չափորոշչի՝ (կետ IV) հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալության վերջնարդյունքներում սովորողին տրվում են նաև հետևյալ դրույթները՝

1. որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք.
2. վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից.
3. գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ.
4. ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ.
5. բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ.
6. դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.
7. ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.
8. գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.
9. արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.
10. արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
11. ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորի ինքնագարգացմանը միտված վարքագիծ.
12. ընկերակցի, դրսևորի բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցի և հաղորդակցվի տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին.
13. բացատրի կոնֆլիկտների ազդեցությունը միջանձնային և միջխմբային հարաբերությունների վրա, կիրառի կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևեր ըստ անհրաժեշտության.
14. կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները, ընդունել սեփական յուրահաստկությունները,

ապա տեխնոլոգիաների կիրառության դեպքում այս դրույթներում կարելի է ավելացնել այն, որ միջնակարգ դպրոցն ավարտած աշակերտը կկարողանա

տիրապետել այնպիսի հատկությունների, որոնք կօգնեն ինքնուրույն որոշումներ կայացնել, իր առջև ծառայած խնդիրները լուծելու ճանապարհներ գտնել, պլանավորել անելիքները, համագործակցել գործընկերների հետ, զրույց վարել, ուրիշների կարծիքի հետ հաշվի նստել և իր սեփական կարծիքն ունենալ, հեշտ ու ազատ աշխատել համակարգչով, տիրապետել որոշակի ծրագրերի հմտությունների, որոնք նախատեսված են ոչ միայն դասեր, այլև աշխատանքային հանդիպումներ կազմակերպելու համար:

Այսօրվա երեխան ուզում է սովորել, ձգտում է իմանալ այն, ինչ իրեն հետաքրքիր է, բայց այն գտնելու համար միշտ փնտրում է հեշտ տարբերակներ:

Մեր օրերում ավանդական դպրոցի՝ կարդալով սովորելու և խստությամբ սովորողի առջև կարդացածը պատմելու կամ անգիր անելու պահանջը քիչ արդյունք է տալիս: Մեկ անգամ դիտելով կամ լսելով սովորողը կարող է բացահայտել նոր մատուցվող կամ վերլուծվող նյութի խորություններ, ինչին գուցե իր կարդալու ընթացքում ծուլանա ուշադրություն դարձնել:

Ուստի նորագույն տեխնոլոգիաներով ու նոր մեթոդներով հագեցած դասերը կարելի է համարել մեր օրերի ամենակարևոր պահանջը, որը դրված է ուսուցչի առջև:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ժամանակակից կրթական ոլորտում դժվար է աշակերտին բերել դասարան և բերելուց հետո էլ ներգրավել դասի մեջ:

Ես իմ խնդրին հանդիպեցի, երբ առաջին անգամ ինձ տրվեց դասվար լինելու հնարավորությունը: Ժամանակ չունեի երկար մտածելու, պետք էր արագ գործել: Ես նկատել էի, որ աշակերտները շուտ են նկատում այն աշակերտին, ով նշանակված է որպես դասարանի ավագ և պետք է որևէ տեղեկություն հաղորդի ուսուցչին: Ապա արագ մտածեցի հետևյալ հարցերի մասին, որոնք խնդիր էին դասարանում: Քանի որ, դասարանի աշակերտների առանձնահատկություններից ելնելով, ես գործ ունեի մի այնպիսի իրավիճակի հետ, որ դասարանում կային ներանձնային խնդիրներ, ոչ տեղին բառապաշարի օգտագործում:

Առաջին գործը եղավ այն, որ կազմեցի հետևյալ աղյուսակը, որտեղ գրված էին աշակերտների անունները, ովքեր վատ բառեր էին օգտագործում դասերի ընթացքում և ամենակարևորը ում էին ուղղված այդ բառերը:

Ո՞վ	Ու՞մ
-----	------

Այս աղյուսակը լիացնում էր դասարանի ավագը, և այն հանձնարարվել էր ողջ դասարանի ներկայությամբ: Այս մեթոդը աշխատեց: Քանի որ ես շաբաթը մեկ

աշակերտների հետ քննարկում էի բոլոր խնդիրները: Օգտագործելով խոսքի ուժը՝ ես հարթեցի բավականին խնդիրներ:

Հաջորդը, աշակերտներին ներգրավելու համար, օգտագործեցի հետևյալ աղյուսակը:

1.Դասերից ուշացողներ
2.Տնային աշխատանք չկատարողներ
3.Դասագիրք չբերողներ

Այս կետերից խուսափելու համար օգտագործեցի նաև սոցիալական կայքով մեր դասարանի խմբային էջը:

Յուրաքանչյուր աշակերտ գիտի, թե շաբաթվա որ օրն է իր՝ տնային աշխատանքները գրելու սահմանված ժամանակը: ՈՒնեմ նայև աշակերտ, ով հետևում է այս ամենին: Եթե որևէ խնդրի պատճառով տվյալ աշակերտը չի հասցրել ճիշտ ժամանակին տեղադրել, ապա ինքը անմիջապես արձագանքում է :

Իմ աշխատանքը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, թե ինչ մեթոդներով կարող է ապահովել աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

***Հետազոտության նպատակը՝*** հետազոտության միջոցով ուսումնասիրել ժամանակակից մեթոդների օգտագործումը դասի ժամանակ և տեսնել, թե դրանք ինչպես կազդեն աշակերտների ներգրավվածության աստիճանի վրա:

Քանի որ ուսուցման մեթոդները փոխներգործուն գործընթաց են ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի հմտությունների և կարողությունների փոխանցում և յուրացում:

«ՈՒսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն»: Միխայիլ Կայլինին

Իմ հետազոտությունը իրականացնելու համար ես կատարեցի ուսումնասիրություններ:


Օգտվեցի մանկավարժական գրականությունից, ուսումնասիրեցի ուսուցման մեթոդները, հնարները, հնարավորությունները՝ հետազոտական աշխատանքս ավելի արդյունավետ դարձնելու համար: Փնտրեցի և գտա այն բոլոր հնարները, որոնք կբարձրացնեին աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի ժամանակ: Ես անընդհատ ուսումնասիրում և վերլուծում եմ իմ դասավանդման գործելակերպը՝ ռազմավարությունը՝ կիրառելով այնպիսի եղանակներ, որոնք բավարարում են իմ աշակերտական կազմի կարիքները: Ուսուցիչները և աշակերտները վերլուծական մոտեցում գուցաբերող դերակատարներ են:

Ուսուցիչները շարունակաբար ուսումնասիրում և վերլուծում են իրենց դասավանդման գործելակերպը՝ ռազմավարությունները կիրառելով այնպիսի եղանակներով, որոնք բավարարում են իրենց աշակերտական կազմի եզակի կարիքները: Աշակերտներն ակտիվորեն ներգրավվում և մասնակցում են ուսումնական պլանի հետ կապված աշխատանքներին և սկսում են ակտիվորեն պլանավորել ու գնահատել իրենց իսկ ուսման պրոցեսը: Ուսումնական կոնկրետ նպատակները բոլորի համար ուսումնական պլանով դասավանդվող բոլոր առարկաների շրջանակներում:

Հիմնավորելով ուսուցման դաս-դասարանային համակարգը՝ Յան Ամոս Կոմենսկին կրթության բովանդակությունը համապատասխանեցնում էր սովորողների տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին: Դեմ լինելով դասային կրթությանը՝ Կոմենսկին զարգացրել է ընդհանուր կրթության գաղափարը, դարերով իշխող դոգմատիկ, մեխանիկորեն սերտելու մեթոդին հակադրել նոր մեթոդներ, հիմնավորել գիտակցականության, զննականության, մատչելիության, հաջորդականության և դիդակտիկական այլ սկզբունքներ, սահմանել դիդակտիկայի «ուկե կանոններ»-ը՝ ուսուցանելիս հեշտից դժվարին անցնելը, կոնկրետից՝ վերացականի, ծանոթից՝ անծանոթին և այլն:

Այդ նպատակով գործադրվում են մի շարք հետազոտական մեթոդներ՝ գիտական դիտողականություն, զրույց, մանկավարժական էքսպերիմենտ, դպրոցական փաստաթղթերի ու սովորողների աշխատանքների ուսումնասիրում, առաջավոր մանկավարժական փորձի ընդհանրացում, անկետային մեթոդ: Վերջերս փորձեր են

արվում կիրառելու մաթեմատիկական, ինֆորմացիոն մոդելավորման մեթոդներ, ֆունկցիոնալ, կառուցվածքային և գենետիկական վերլուծության բարդ համակարգեր, տեխնիկական բազմապիսի միջոցներ: Ուսուցման և կրթության տեսական և գործնական-կիրառական հարցերը



Դասավանդման կոնկրետ նպատակներ բոլոր մանկավարժների համար (այս նպատակները վերաբերում են ոչ միայն դասարանային կամ անկախ ուսուցման ուսուցիչներին, այլ բոլոր շահառուներին, այդ թվում, սակայն ոչ միայն ուսումնական հարցերով դեկավարներին, ուսումնական հարցերով խորհրդատուներին, կրկնուսուցում իրականացնող անձնակազմին):

- Աշակերտներին տալ մետալեզվաբանական և մետաճանաչողական գործընթացներում ներգրավվելու հնարավորություններ և օգնել նրանց բացահայտել, թե ինչպես է լեզուն դրսևորվում բարդ տեքստերում:
- Ստատարել աշակերտին, որպեսզի նա իր կարողությունների շրջանակներում խորանա տեքստի բարդ փոխազդեցություններում «գաղափարական, ակադեմիական և լեզվաբանական ունակություններ զարգացնելու» և դատողական քննարկումներ անելու համար:
- Օգնել աշակերտներին օգտագործել լեզուն որպես կշռադատելու և հասկանալու միջոց:

լուծելիս դիդակտիկական դիմում է սոցիոլոգիայի, կիբեռնետիկայի, ընդհանուր, տարիքային և մանկավարժական հոգեբանության, բարձրագույն նյարդային

համակարգի գործունեության, տարիքային ֆիզիոլոգիայի և այլ գիտությունների նորագույն տվյալներին:

Ուսուցման տեսության նպատակն է սահմանել կրթության բովանդակությունը, ուսուցման սկզբունքները, մեթոդները և նրա կազմակերպման ձևերն ու եղանակները: Շատ մանկավարժներ ընդհանրացնելով ձևակերպում են, թե դիդակտիկայի խնդիրն է սահմանել «Ինչ սովորեցնել» և «Ինչպես սովորեցնել»: Առաջինը վերաբերում է կրթության բովանդակությանը, երկրորդը՝ ուսուցման մեթոդներ:

**Ակտիվ ուսուցումը** ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները: Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների

կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս- դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի

միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՌԻՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈԻԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈԻԱՄ-ի կրառամաբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

Ուսումնական դրական խթանի ձևավորում.

Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.

Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.

Ինքնագործունեության խթանում,

Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն

Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում.

Ստեղծագործական մտածելակերպի զարգացում.

Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում.

Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում.

Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում.

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ:

Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:



**Նախագծային մեթոդ** խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով: Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:


Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

1. Ռեֆլեկտիվ հմտություններ
2. Որոնողական, հետազոտական հմտություններ
3. Համագործակցային հմտություններ
4. Կառավարման կարողություններ, հմտություններ
5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ
6. Ներկայացման հմտություններ

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ



Նախագծային մեթոդ՝ հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն:  
Ուսուցիչ-մշակող, համակարգող, փորձագետ խորհրդատու:



Աշակերտ՝ քննադատական և ստեղծագործական մտածողություն

Եթե աշակերտ-ներկայացուցչի ճանաչումը, որն իր հերթին ստեղծում է ուսումնական արդարության զգացում, բացակայում է, հնարավոր չի լինի իրոք մոտիվացնել աշակերտների ներգրավվածությունը:

Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է ամեն ինչում ներգրավել աշակերտների ներկայացուցչական խորհուրդը: Օրինակ՝ տոնական միջոցառումների ժամանակ ինքնուրույն կառավարել բյուջեն, բայց նաև թույլ տալ և խրախուսել նրանց դպրոցի կանոնակարգի մշակման մեջ մասնակցություն ունենալ, քանի որ հենց աշակերտներն են, ովքեր պետք է հարգեն դպրոցի կանոնակարգը:

Այս ողջ գործընթացը աշակերտներին հնարավորություն է տալիս զգալ իրենց ուժը, քանի որ նրանք ոչ միայն նպաստում են դպրոցական կյանքի բարելավմանը, այլ նաև տեղեկացված են այդ փոփոխությունների իրականացման գործընթացին: Օրինակ՝ իրավական հարցերի և դրա հետ կապված ցանկացած սահմանափակումներ հասկանալը և բյուջեի կառավարումը:

Կարևոր է ընդգծել համագործակցային նախագծերի օգուտը, ինչպիսիք է Իթվինինգը: Աշակերտները կարող են համագործակցել այլ դպրոցի աշակերտների հետ, և արդյունքում կարողանան հասկանալ տարբեր դպրոցների համակարգերը և մտածելակերպերը: Այս համագործակցային հաղորդակցումը հնարավորություն է տալիս աշակերտներին դառնալ ավելի մոտիվացված:

Աշակերտների ներգրավվածությունը դպրոցի կյանքի բոլոր մակարդակներում (կանոնակարգեր, տոնակատարություններ, այլ միջոցառումներ, համատեղ նախագծեր) հետզհետե կստեղծի դպրոցին պատկանելու ավելի մեծ զգացողություն: Այս զգացումը դառնում է կատալիզատոր՝ աշակերտներին ավելի շատ մոտիվացնելու դառնալ փոփոխության առաջամարտիկներ:

Ընտրում եմ 4-րդ դասարանը: Քանի որ բավական աշխատանք եմ իրականացրել այս դասարանում ,որ յուրաքանչյուր աշակերտ դպրոցում իրեն զգա կրթական ոլորտին լիիրավ անդամ:

Ընտրեցի հետազոտական տիպը՝ բնական-համեմատական, ես իմ փորձարկումները կկատարեմ, որոնցով կաշխատեմ խթանել իմ աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Խնդրին տարբեր կողմերից նայելով հասկացա, որ որոշ աշակերտներ չեն ներգրավվում, քանի որ ձանձրանում են դասից, կամ հետաքրքիր չլինելու պատճառով զբաղվում են տարբեր բաներով:

Գիտամանկավարժական գրականության ուսումնասիրությունները ինձ բերեցին այն համոզմանը, որ աշակերտը պետք է միշտ զբաղված լինի:

Ես շատ եմ սիրում կրկնել այս խոսքերը. այն աշակերտը, ով զբաղված չի, «վտանգավոր» է:

Եվ ես հասկացա ,որ պետք է աշխատեմ իմ դասս համեմելով ժամանակակից մեթոդներով: Դպրոցի տնօրենին դիմում ներկայացնելուց հետո,ես անցա իմ բուն աշխատանքային գործընթացին: Հիմնվելով ն՝ անկախ, ն՝ կախյալ փոփոխականներից՝ ընտրեցի ակտիվ և նախագծային ուսուցման մեթոդներ: Քանի որ յուրաքանչյուր նոր մեթոդ կարող է փոփոխվել ուսուցչի կողմից և նորովի մատուցվել:


## Հետազոտության ընթացք

Առաջին դասի նկարագրում և արդյունք.

4-րդ դասարանում ես անցկացրի իմ առաջին դասը: Օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ դասս համեմեցի գեղեցիկ շնորհանդեսով և ստացա այն, ինչ ուզում էի: Բայց աշակերտներին լիովին ներգրավելու համար օգտաքործեցի նաև ուսուցման այլ մեթոդներ: Շնորհանդեսի և հարց ու պատասխանի օգնությամբ ներգրավեցի գրեթե ողջ դասարանը: Այնուհետև կատարեցին քարտային աշխատանք գույգերով:

Աշակերտները ներգրավվեցին, բայց արդյունքը ինձ չգոհացրեց, քանի որ քարտային աշխատանքի ծավալը մեծ էր, և բոլորը չկարողացան մասնակից դառնալ: Այստեղ նախագծային մեթոդի կիրառությունը չտվեց իր արդյունքը:

Իսկ դրականն այն էր, որ մտագրոհի և հարցազրույցի մեթոդները ակտիվ համագործակցային վիճակի հասցրին դասարանը:




2-րդ դասը օտար դասարանում անցկացրի՝ կիրառելով մեթոդներ՝ ձևավորելով համագործակցային հմտություններ, կառավարման կարողություններ (նախագծային մեթոդի օգնությամբ):

## Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Մ Ե Թ Ո Ղ

Մեթոդի նպատակն է՝

- սովորեցնել սովորել
- ուղղորդել իմացական գործընթացը,
- խթանել հետազոտական աշխատանքը,
- զարգացնել ստեղծագործական միտքը,
- ինֆորմացիան վերլուծելու կարողության զարգացում,
- ինտելեկտուալ գործունեության սեփական փորձի ձեռք բերում:




Աշակերտները համագործակցային և կառավարման հմտությունների շնորհիվ կարողացան գույգերով կատարել իրենց առջև դրված պահանջները:

Նախագծային մեթոդը աշխատեց, քանի որ հասկացան թեման և հիմնական խնդիրը: Այնուհետև յուրաքանչյուր խումբ տեղում կատարեց դերաբաշխում, պլանավորեց իր գործունեությունը, ընտրեց իր ներկայացման ձևերն ու եղանակները:

Խմբերը ներկայացրին իրենց աշխատանքը, կատարեցին փոխադարձ գնահատում: Իրականացրեցի նաև 3-րդ դասը: Օգտագործեցի ուսուցման ակտիվ և նախագծային մեթոդներ: M-աձև աղյուսակ և Վենի դիագրամ, նկարի շուրջ ստեղծագործական աշխատանք:

Կրթական ցործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին՝ նպաստելով սովորողների կարողունակությունների ձեռքբերմանը:

Ինտերակտիվ կամ փոխներգործուն /inter-փոխադարձ, act-ազդել, ներգործել/ նշանակում է փոխազդել, գրուցել կամ երկխոսել:



## Տվյալների մշակում և վերլուծություն

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից.
- կիրառվեն աշակերտների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում.
- լինեն բազմատեսակ.
- խրախուսեն աշակերտների ակտիվությունը դասարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության.
- համապատասխանեն ուսուցման նպատակներին.
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը.
- աշակերտների և ուսուցիչների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ.
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, ուսուցիչների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Դաստիարակության գործում մեծագույն սխալը չափից դուրս շտապողականությունն է: Ժան-Փակ Ռուսո

Ուսուցիչների ամբողջ հպարտությունն աշակերտների մեջ է, իրենց ցանած սերմերի աճի մեջ: Դևիտրի Մենդելև

# Եզրահանգում

Ամփոփելով վերոհիշյալ վերլուծությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ կարևոր եզրահանգումները.

- Դասավանդման մեթոդներում որոշակի փոփոխությունն նկատվում է, քանի որ սկսում ենք կիրառել փոխգործուն մեթոդներ:
- Ուսումնական գործընթացի ժամանակ ապահովվում է բազմազանությունը և կապը աշակերտի հետ, որը թույլ է տալիս այս գործընթացում առավել ակտիվորեն ներգրավել բոլոր աշակերտներին:
- Հարցադրումների հաճախականությունը դասարանում բավականին բարձր է, սակայն գերակշռում են գիտելիքի և ընկալման հարցերը, որոնք աշակերտից պահանջում են նվազագույն մտավոր աշխատանք: Արդյունքում խրախուսվում է հիշողության վրա հիմնված գիտելիքի զարգացումը և անտեսվում այնպիսի հմտությունների զարգացումը, ինչպիսիք են ինքնուրույն և ստեղծագործական կարողությունները:
- Ուսումնական գործընթացի կառավարման հիմնական դժվարությունը բոլոր աշակերտներին այս գործընթացում ներգրավելն է:

Բոլոր երեք դասերից քաղած տվյալները ցույց տվեցին, որ և՛ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, և՛ ժամանակակից մեթոդների իրագործումը կարող է մեզ տալ այն,ինչ ուզում ենք. ճիշտ է՝ հնարավոր չէ մեկ դասի ժամանակ շատ մեթոդներ կիրառել, սակայն եթե հաշվի առնենք դասի կառուցվածքը, ուսումնական նյութի ծավալը, աշակերտների տարիքը, պատրաստվածության մակարդակը, դիդակտիկ նյութերը և իհարկե յուրաքանչյուր ուսուցչի պատրաստվածությունն ու պատրաստակամությունը, հնարավոր է լուծել մեր առջև դրված շատ խնդիրներ:

Գիտելիքը մարդուն դարձնում է ազատ ու մեծ: Սովորողին գիտելիքի բարձր մակարդակի հասցնելու համար կիրառելի նորագույն մեթոդներին ու ձևերին պետք է տիրապետի դպրոցում աշխատող ուսուցիչը, և քանի որ ապագան արդեն եկել է: Ինչպես Մ. Գորիկին է ասել՝ «Ուսուցիչը պետք է ուշադիր աշակերտ լինի», նա պետք է ընդունի, որ իր համար անհասկանալին կարող է հասկանալ ու ինքն էլ կարող է սովորել ժամանակի հետ քայելուն և երբեք թևաթափ չլինի, նայի առաջ, գործի առաջադեմ հայացքներով:

Բացի այդ, մանկավարժական գործընթացում ՏՀՏ-ի ներդրումը բարձրացնում է ուսուցչի հեղինակությունը սովորողի մոտ , քանի որ ուսուցումն իրականացվում է ժամանակակից, ավելի բարձր մակարդակով, աճում է ուսուցչի ինքնագնահատականը, քանի որ նորագույն տեխնոլոգիաներ կիրառելու ջանքերի շնորհիվ ուսուցիչը զարգացնում է նաև իր մասնագիտական կարողությունները: Սովորողը ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում, երբ հասկանում է, որ

ուսուցիչը ոչ միայն իր մանսագիտական նյութն է իրեն ներկայացնում, այլև սովորեցնում է օգտվել նորագույն տեխնիկական միջոցներից. չէ՞ որ որքան էլ այսօր դպրոցականը հեշտությամբ նավարկում է համացանցային տիրություն՝ որոնողական համակարգերում, կամ տարբեր ոչ ինտելեկտուալ խաղեր խաղալիս, նույնքան դժվարությամբ է նա լուծում թեկուզ «google classroom»-ում իրեն հանձնարարված թեստը:

Այսպիսով՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսուցանվող դասերի ընթացքում կամ սովորողի գիտելիքը ստուգելու նպատակով որպես լրացուցիչ նյութ նպատակահարմար է, դասապրոցեսը դարձնում է հետաքրքիր, արդյունավետ, իսկ դրանց կիրառությունը մերօրյա դպրոցում՝ պարտադիր:



## Գրականության ցանկ

1. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ. Հայաստան 2020: Ուսուցման արդյունավետ հնարներ /Ս. Խաչատրյան 74 էջ/
2. Վազներ 2008-2012թթ Վիլյամ Ս. Հարթ ( էջ15): Ուսումնական հնարավորություններ :Գիտելիքի կազմակերպիչներ
3. Հայկական սովետական հանրագիտարան (հատոր5, էջ 535 ): Յան Ամոս Կոմենսկի «Մեծ դիդակտիկա»
4. Балаев А.А. Активные методы обучения. М.,( 2006).
5. Смолкин А.М. Методы активного обучения. М.,( 1991).
6. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула (2002)
7. Выготский Л.С. Педагогическая психология.
8. [\[https://web.archive.org/web/20080330010914/http://distant.ioso.ru/project/meth%20project/metod%20pro.htm Archived](https://web.archive.org/web/20080330010914/http://distant.ioso.ru/project/meth%20project/metod%20pro.htm)
9. Մանկավարժական մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար (2004թ. 178 էջ)